ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 454 - Ա **02 նոյեմբերի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 223-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի>> 17-րդ կետի պահանջը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի հունիսի 17-ի <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2007 թվականի ապրիլի 26-ի N111-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N223-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը

<<Ստամբոլցյան Հերմինե / մանկխորհրդի ներկայացուցիչ />> բառերը փոխարինել <<Գևորգյան Եվգենյա Շադինի / մանկխորհրդի ներկայացուցիչ /-երեք տարի ժամկետով>> բառերով.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ